129 13

Հ. Կ. Կ. (ԲՈԼՇ.) ՅԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԵ

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾՐԱԳԻՐ

Հ. Կ. Կ.

ՅԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԵՅԻ ԵՎ ԿՈՄԲՋԻՋՆԵՐԻ

1924 թ. ՆՈՅԵՄԲԵՐ—1925 թ. ԱՊՐԻԼ ԱՄԻՍՆԵՐԻ

ՅԵՐԵՎԱՆ
1925

Հ. Կ. Կ. (ԲՈԼՇ.) ՅԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԵ

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾՐԱԳԻՐ

Հ. Կ. Կ.

ՅԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ ԿՈՄԲՋԻՋՆԵՐԻ

1924 թ. ՆՈՅԵՄԲԵՐ—1925 թ. ԱՊՐԻԼ ԱՄԻՍՆԵՐԻ

Ա 38402

ՅԵՐԵՎԱՆ
1925

Պատ. № 1598. Տիրաժ 1000.

Տպագրական տրեստի 2-րդ տպարան Յերեվան.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾՐԱԳԻՐ

Հ. Կ. Կ. Յրկոմի Կազմ-բաժնի **1924** *թ. Նոյեմբերի 1-ից մինչև* **1925** *թ. Ապրիլի* **31**-*ը։*

ՆԵՐԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ—ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ

1. Կատարել կոմբջիջների աշխատանքների ուսումնասիրություն, հետևվել նրանց աշխատանքների կարգավորմանը յեվ ակտիվության բարձրացմանը։

2. Խորացնել աշխատանքը բաղբջիջներում, կուսշինարարության, տնտեսական, արհեստակցական յեվ այլ աշխատանքների մասին նրանց առաջադրել խնդիրներ։ Առանձնապես ուշադրություն դարձնել բաղբջիջներում տարիֆային քաղաքականությունը պարզաբանելու վրա։

3. Աշխատանքի արտադրողականության բարձրացումը դարձնել բաղբջիջների հիմնական խնդիրը, արտադրության բարձրացմանը ակտիվ կերպով մասնակից դարձնել արտադրական բջիջներին յեվ անկուսակցական բանվորական մասսաներին՝ մանրամասնորեն նրանց ծանոթացնելով արտադրական հիմնարկի դրության, նշանակության, ծրագրի ու հերթական խնդիրների հետ՝ բջիջների դռնքաց ժողովներում լսելով հիմնարկների պետերի զեկուցումները։

4. Մեծ ուշադրություն դարձնել ակտիվ, գործունյա յեվ պատրաստված քարտուղարների կադր ունենալու վրա։ Կուսթեկնածու քարտուղարների քանակը հասցնել մինիմումի։

5. Բջիջների աշխատանքները ղեկավարելու յեվ աշխատանքի ընթացքում նկատվող թերությունները արմատախիլ անելու համար ամիսը մեկ անգամ հրավիրել բջիջների քարտուղարների խորհրդակցություններ։

6. Շարունակել Կազմ-Կոլեգիայի նիստերում, մանավանդ

գյուղկոմբջիջների, բարտուղարների զեկուցումները լսելու սիստեմը՝ ավելի կանոնավորելով ու համակարգելով այն։

7. Ուժեղացնել կուսակցականների կազմը թե քանակապես յեվ թե վորակապես։ Զանազան հիմնարկների տեղկոմներում, վարչություններում, կոլեգիաներում յեվ այլն։

8. Խորացնել ֆրակցիոն աշխատանքը հիմնարկներում, հրավիրել ֆրակցիոն խորհրդակցություններ յեվ ցուցմունքներ տալ ֆրակցիոն աշխատանքներին։

9. Միմիանց աշխատանքի փորձը ոգտագործելու նպատակով շարունակել միանման հիմնարկներին կից բջիջների փոխադարձ կապի հաստատումը։

10. Խիստ կերպով պահպանել բջիջների կազմակերպչական արտադրական սկզբունքը, սրանից յելնելով ընկերներին վերջնականապես ամրացնել ովյալ բջիջին։

11. Շարունակել աշխատանքի բաժանման սիստեմը, աշխատանքի միանման ասպարեզներում ամրացված ընկերների խորհրդակցությունների միջոցով ուժեղացնել նրանց աշխատանքները։

12. Առանձնապես ուշադրություն դարձնել որինակելի կոմբջիջների աշխատանքների վրա՝ կիրառելով ծրագրային աշխատանք յեվ ունենալով վորակյալ քարտուղարներ։

13. Առանձնացրած բջիջների աշխատանքները ղեկավարելու համար ամրացնել նրանց պատասխանատու ընկերներ։ Բջիջների աշխատանքների փորձի հաշվեառման յեվ ամփոփման համար յուրանքանչյուր ամիս ամրացվածներից զեկուցում պահանջել

14. Անկուսակցական աշխատավորական լայն մասսաներին դեպի կոմկուսը քաշելու համար բջիջների դռնքաց ժողովները հաճախակի դարձնել, նախապատրաստելով որակարգի հարցերը։

15. Առանձնացված բջիջների զեկուցումները լսել նախագահության նիստերին։

19. Կոմունիստներին 100 տոկոսով անդամագրել կոոպերացիային։

17. ՀՈՆԲԸ-ի, ԲՈՄԸ-ի յեվ Քիմիայի Բարեկամների Ընկերության բջիջների կազմակերպան մեջ ունենալ մասնակցություն, դրանց բյուրոները ուժեղացնել կուս—ընկերներով։

18. Ուսումնասիրել յեվ ոգտագործել կուս—ընկերների վրա յեղած մատերիալները՝ հիվանդագին յերևույթների դեմ պայքար մղելու համար։

19. Բջիջների ակտիվությանը զարկ տալու յեվ միատիպ բջիջներին հետաքրքրող հարցերը քննության առնելու համար բաղբջիջները բաժանել վեց խմբակների յեվ ամիսը մեկ անգամ հրավիրել միացյալ ժողովներ։

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

1։ Ձեռնարկել գյուղացիներից կուսակցության մեջ ընդունելու աշխատանքներին՝ առաջնություն տալով կոմյերիտականներին, բատրակներին յեվ զորացրված կարմիր բանակայիններին։

2։ Ձեռնարկել 20—21 թ.թ. թեկնածուներին անդամ փոխադրելու աշխատանքներին, այն միաժամանակ ոգտագործելով թեկնածուական կազմը ուսումնասիրելու յեվ անկայուն, անհարազատ ու բալլատ տարերից ազատվելու համար։

3. Բանվորուհիներին յեվ գեղջկուհիներին գրավել դեպի կոմկուսը, աշխատել ընդունելությունների ընթացքում կուսակցության մեջ ընդունվող կանանց թիվը հասցնել ընդունվողների 10 տոկոսին։

4. Շարունակել բանվորներին կուսակցության մեջ ընդունելը։

5. Գյուղացիների յեվ բանվորների ընդունելությունները կանոնավորել այնպես, որ բանվորական մասի կորիզը մնա նույն տոկոսը։

6. Վերջացնել գյուղկոմունիստների տնտեսական ուռճացման ուսումնասիրությունը, մշակելով նյութերը պարզել տնտեսական ուռճացման դեմ պայքարելու միջոցները։

7. Ստուգումները ոգտագործել կազմակերպության թերությունները վերացնելու յեվ անդամներին անհատապես ուսումնասիրելու համար։

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ, ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ, ՀՐԱՇԱՆԳԶԱԿԱՆ ՅԵՎ ԿԱՊԻ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

1. Հրահանգիչների յեվ կոմբջիջների հաշվետվությունների յեվ զեկուցումների ներկայացումը կանոնավորել՝ նրանց ստացումը հասցնելով 100 տոկոսի։

2. Ինֆ. հաշվետվության եվ զեկուցման սխեմաները համապատասխանեցնելով Կենտկոմին, հեշտացնել եվ մշակել բջիջների համար առանձին եվ հրահանգիչների համար առանձին սխեմաներ։

3. Գավառամասերում եվ բջիջներում հրահանգիչների կատարած առորյա աշխատանքների հաշվեառման եվ դրանց թափին ու պատկերը պարզելու նպատակով հրահանգիչների համար սահմանել որագրային սիստեմ։

4. Թեթեվացնել Ինֆ. Հր. Վիճ. Յենթաբաժինը ավելորդ նյութեր ստանալուց եվ կարգավորել անհրաժեշտ նյութերի ժամանակին ստացումը։

5. Շարունակել հրահանգչական եվ անհատական նամակների միջոցով բջիջների աշխատանքներին ղեկավարություն եվ ցուցմունքներ տալը։

6. Ուժեղացնել կենդանի կապը բջիջների եվ գավառակների հետ եվ կատարել դրա կանոնավոր հաշվեառումը։ Գավառակները ու բջիջները մեկնող Յերկոմի անդամների, մոբիլիզացիայի յենթարկվածների եվ ամրացվածների հաշվեառումը կանոնավորել եվ նրանց հաշվեառու դարձնել Կոմիտեյի առաջ։

7. Հետեվել բջիջների աշխատանքների հաշվեառման կանոնավորմանը եվ կազմակերպության անդամների կուսպարտականությունների կատարման ստուգմանը։

8. Ամբողջությամբ կիրառել կյանքում անդամների եվ թեկնածուների հաշվեառման քարտերը, լրացնել դրանք, ժամանակին արտացոլելով նրանց մեջ ընկերների դրության բոլոր փոփոխությունները։

9. Անհրաժեշտ համարել տեղերում բջիջների անհատական հրահանգումը, ոգտագործել քարտուղարների խորհրդակցությունները՝ որակարգում դնելով վիճակագրության վերաբերող հարցեր։

10. Վիճակագրական միասնական մյուս ձեվերը կատարել ամբողջությամբ եվ ժամանակին։

11. Անհրաժեշտ համարել վիճակագրության միջոցով բոլոր բաժինների եվ Կոմիտեյի նախագահության աշխատանքների արտացոլումը՝ մշակել համապատասխան ձեվեր եվ ոգտագործել յեղած նյութերը։

12. Պատրաստել դիագրամաներ, վորոնք ընդգրկեն բաժինների, կոմիտեյի նախագահության եվ բջիջների աշխատանքները, կազմակերպության կազմը (ըստ դեմոգրաֆական խմբակների) բջիջի քարտուղարների կազմը, բջիջների քանակը, պա-

տասխանատու աշխատակիցների եվ Լենինյանների կազմի աճումը եվ անգործների շարժումը՝ համաձայն կուս. 6-րդ կոնֆերանսի նյութերի։

ՀԱՇՎԵԱՌՄԱՆ ԲԱՇԽՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Բջիջների միջոցով առաջ քաշել վոչ պակաս 15 կուսակցականներ՝ կուսակցական, տնտեսական, կոոպերատիվ, խորհրդային պատասխանատու աշխատանքի։ Առաջ քաշվողների 75 տոկոսը հատկացնել բանվորներին, վորոնց թվում եվ Լենինյաններին։

2. Մոբիլիզացիայի յենթարկել Լենինյաններից վոչ պակաս 5 ընկեր եվ ուղարկել կոոպերատիվ եվ տնտեսական որգանները իբրեվ շտատային պրակտիկանտ պաշտոնավարողներ եվ վեց ամսվա ընթացքում նրանց պատրաստել պատասխանատու աշխատանքի նշանակելու համար։

3. Կուսակցական վորակյալ ընկերներ, վորոնք ըստ իրենց մասնագիտության վարում են անհամապատասխան աշխատանք՝ համապատասխան աշխատանքի ուղարկելու համար նյութեր պատրաստել։

4. Մի շարք անհամապատասխան անկուսակցական աշխատակիցներ, վորոնք անմիջական շփում ունեն մասսաների հետ, փոխարինել կուսակցականներով։

5. Պարզել հիմնարկների (համաձայն նոմենկլատուրաների) ա. անպետք աշխատակիցների, բ. աննպատակահարմար ոգտագործվողների, գ. այլ ասպարեզ տեղափոխվելու յենթակաների եվ դ. առաջ քաշման յենթակաների կազմը։

6. Գործազրկության դեմ պայքարը ուժեղացնել հիմնարկների կոմունիստ պետերի սիստեմատիկ խորհրդակցությունների միջոցով։ Բջիջների քարտուղարների միջոցով ստանալ պարբերաբար տեղեկություններ իրենց հիմնարկների պետերի կողմից անկուսակցական աշխատակիցներ ընդունելու մասին։ Բջիջներին մասնակից դարձնել գործազրկության դեմ վարած կռվին։

7. Կոոպերատորների հաշվեառումը ոգտագործել՝ հետագայում կոոպերացիային կուսակցական ուժեր տրամադրելու համար։

8. Հաշվի առած պատասխանատու աշխատակիցների աշխատանքի մասին (համաձայն նոմենկլատուրաների) տեղեկու-

թյուններ հավաքել հիմնարկների պետերից, արհմիություններից, բջիջներից յեվ Յերկոմի հրահանգիչներից։ Տեղեկությունները ձեվակերպել Հաշվե-բաշխման կողմից յեվ ներկայացնել Կոմիտեյին ի հաստատություն։ Անկուսակցական պատասխանատու աշխատակիցների յեվ մասնագետների հաշվեառումը կատարելուց հետո հավաքել նայեվ նրանց բնութագրերը։

9. Հաշվի առնել շրջանային մասշտաբի ընկերներին։

10. Հաշվի առնել կուսակցական մասնագետներին։

11. Ուսումնասիրել ընտրովի կազմակերպությունների կազմը։

12. Լենինյանների յեվ ընդհանրապես պրոպագանդիստական ապարատում օգտագործելու համար հաշվի առնել պրոպագանդիստական յեվ դասախոսական ընդունակություն ունեցողներին։

13. Լ. Կ. Յե. Մ. Հաշվեառման ապպարատի հետ սերտ կապ հաստատել՝ հաշվեառման ապարատում օգնելով նրանց։

14. Հաշվեառման յենթակա կուսակցական աշխատակիցների յեվ պատասխանատու աշխատակիցների անձնական գործերը վերջնականապես կարգի բերել, անձնական գործերը ազատել միակողմանի բնույթ կրող բնութագրերից յեվ ավելորդ նյութերից (համաձայն Ռ. Կ. Կ. Կ. Կ. 24 թ. փետրվար ամսի նո. 29 շրջաբերականի)։

15. Բջիջների քարտուղարների խորհրդակցություններում հաշվեառման մասին զեկուցումներ դնելը անհրաժեշտ համարել։

16. Կամավոր հեռացող կուսակցականների հեռացման պատճառները պարզել յեվ ուսումնասիրել։

17. Գավառային հիմնարկներին կից կազմակերպել տեղեկատու հաշվեառման շտաբներ։

18. Ուժեղ կապ պահպանել ու ղեկավարել տեղեկատու-հաշվեառման աշխատանքները՝ պարբերաբար խորհրդակցություններ հրավիրելով։ Համապատասխան հարցաթերթիկների միջոցով կատարել նայեվ հիմնարկների անձնական կազմի ուսումնասիրությունը՝ Կ. Վ. Հանձնաժողովի ներկայացուցչի ժամանակությամբ։

ԱՇԽԱՏԱՆՔԸ ՅԵՐԿԱԹ-ԳԾՈՒՄ

1. Անդրյերկոմի հրահանգի համաձայն բոլոր բջիջներին մասնակից դարձնել աշխատանքի արտադրողականության բարձրացմանը։

2. Նպատակ ունենալով ուժեղացնել կուսաբաժինները թերթերում՝ հրավիրել Յերկաթ-գծի կուսթղթակիցների յեվ բանթղթակիցների խորհրդակցութիւններ։

3. Խոշոր ըջիջների նիստերում յեվ խորհրդակցութիւններում սիստեմատիկաբար լսել (կուսակցական յեվ անկուսակցական) մասնագետների յեվ պետերի զեկուցումները գծի արտադրական-տեխնիկական դրութեան մասին։

4. Ուժեղացնել աշխատանքները գծի մերձակայքում ապրող բանվորների ընտանիքների յեվ աշխատավորուհիների մեջ։

5. Կատարել կոմմունիստների ճշգրիտ հաշվեառում, պարզել բանվորների քանակը, դազգյահի բանվորների տոկոսային հարաբերութիւնը դեպի աշխատողները։

6. Ուսումնասիրել Լենինյան կոչի բանվորների աշխատանքները յեվ թույլ չտալ նրանց անջատումը կուսակցական հին ընկերներից ըջիջային յեվ խմբակային պարապմունքներում։

7. Շրջանի աշխատանքի տեսչի հետ միասին կազմել համապատասխան հարցացուցակ յեվ ձեռնարկել ուսումնասիրելու բանվորների կենցաղը ըստ սպասավորութիւնների։

8. Գծում կազմակերպել պիոներական կոլեկտիվներ։

ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՅՈՒՂՈՒՄ

1. Վերջացնել տիպիկ գյուղերի ուսումնասիրութիւնը յեվ մշակելով նյութերը՝ պարզել գյուղում կատարվող սոցիալ-տնտեսական յերեվույթները յեվ նրանց ազդեցութիւնը թե ըջիջների յեվ թե առանձին կոմմունիստների վրա։

2. Ցայտուն կերպով դասակարգայնորեն շերտավորվող գյուղերի կոմբջիջները ուսումնասիրել յեվ պարզել գյուղում կատարվող սոցիալ-տնտեսական պրոցեսի ազդեցութիւնը կոմբջիջի վրա։

3. Խորացնել աշխատանքը բատրակների մեջ, Հողանատամիութեան կենտրոնական վարչութեան միջոցով մշակել բատկոմների աշխատանքի ծրագիր ու տարածել միութեան կանոնադրութիւնը։

4. Առաջիկա ընդունելութիւնների ժամանակ ամեն կերպ աշխատել ուսուցչութեանը գրավել դեպի կոմկուսը յեվ նրանցից ակտիվներին ու հարազատներին ընդունել կուսակցութեան մեջ։

5. Ուժեղացնել գյուղի հետ կապ ունեցող արհմիութիւնների

աշխատանքները. ինչպես որինակ. Լուսաշխի, Բժշկասանիտարական յեվ Հողանատուի։

ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ

1. Պարզել սահմանապահ զորամասերի կազմակերպչական սխեման, կապել նրանց բջիջները Կոմիտեյի հետ յեվ ուժեղացնել կոմիտեյի ղեկավարությունը, նրանց համար մշակել աշխատանքի ծրագիր։

2. Արտադրական բջիջները կապել զինվորական բջիջների հետ։

3. Փոխադարձ կապ հաստատել Քաղբաժնի հետ՝ փոխանակելով հաշվետվությունները, զեկուցումները յեվ այլն։

ԼԵՆԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Լենկոմյերիտմիության մեծահասակ լավագույն անդամներին փոխադրել կոմկուսի մեջ՝ կուսակցության կորիզը միության մեջ ուժեղացնելու համար։

2. Հրավիրել կուս. յեվ ԼԿՅԵՄ բջիջների միացյալ ժողովներ յեվ սիստեմատիկաբար պարզաբանել կուսակցության խնդիրներն ու դերը յեվ Լենկոմյերիտմիության տեղը բանվորական շարժման մեջ՝ կանգ առնելով 13-րդ համագումարի վորոշումների վրա։

3. Ուժեղացնել փոխադարձ կապը կոմմունիստական յեվ Լենկոմյերիտմիության բջիջների միջեվ, քարտուղարների զեկուցումները փոխադարձաբար լսել բջիջների նիստերում։ Կոմբջիջների քարտուղարների զեկուցումների մեջ կանգ առնել Լենկոմյերիտմիության մեջ կոմբջջի կատարած աշխատանքների յեվ ղեկավարության վրա, իսկ Լենկոմյերիտմիության՝ կոմբջջի կատարած աշխատանքի յեվ ղեկավարության յեվ Լ. Կ. ՅԵ. Մ. բջիջի գործունեության վրա։ Լենկոմյերիտմիության զեկուցումները ոգտագործել ցուցմունքներ յեվ հրահանգներ տալու համար։

4. Խոշոր ուշադրություն դարձնել ԼԿՅԵՄ հիվանդագին յերեվույթների վրա յեվ նրանց դեմ միջոցներ ձեռք առնել։

ԱՇԽԱՏԱՆՔԸ ԱՐՇԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Ստուգել բոլոր կուսընկերների արհեստակցական միութենական անդամատոմսերը՝ բջիջների միջոցով հետևվել կուսընկերների միութենական պարտականությունների կանոնավորմանը։

2. Կոմբջիջների բյուրոների յեվ տեղկոմների հաճախակի միացյալ նիստեր գումարել յեվ քննության առնել միութենական սկզբունքային յեվ գործնական անհրաժեշտ խնդիրները։

3. Կոմմունիստ ակտիվ ընկերներով ուժեղացնել թույլ տեղկոմների կազմը։

4. Հսկել տեղկոմների ֆրակցիաների աշխատանքների վրա յեվ կուս. պատասխանատվության յենթարկել իրենց վրա դրված պարտականությունները չկատարողներին։

5։ Միության, խորհրդային յեվ տնտեսական ապարատներում աշխատող ղեկավարող ընկերներին պարբերական խորհրդակցությունների հրավիրել՝ գործնական աշխատանքների ընթացքում ծագած դժվարությունները հարթելու համար։

6. Համաքաղաքային ընդհանուր ժողովներում լսել կենտվարչությունների կոմֆրակցիաների զեկուցումները յեվ տալ համապատասխան ցուցմունքներ։

7. Յերեք ամիսը մեկ անգամ հրավիրել տեղկոմների կոմֆրակցիաների ժողովներ՝ նրանց հրահանգելու յեվ աշխատանքի ծրագիր առաջադրելու համար։

8. Կոմբջիջների ժողովներում պարբերաբար լսել կոմֆրակցիաների քարտուղարների զեկուցումները՝ աշխատակիցների տրամադրություններին, առորյա կարիքներին յեվ պահանջներին տեղյակ լինելու համար։

9. Կազմակերպչական առաջին շրջանում Յերկոմի հրահանգիչներին հանձնարել միության կոլեկտիվների յեվ աշխատանքների կազմակերպումն ու նախաձեռնումը գավառակներում վերցնել իրենց վրա։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾՐԱԳԻՐ

Ագիտ—Պրոպ Բաժնի 24 թ. նոյեմբերի 1-ից մինչև 25 թ. ապրելի 31-ը

ԿԱԶՄԱԿԵՐՊԶԱԿԱՆ

1. Կանոնավորել յեվ ուժեղացնել Ագիտ—Կոլլեգիայի աշխատանքները՝ ունենալով առնվազն յերկու շաբաթը մեկ նիստ։

2. Շրջաններում ագիտացիոն աշխատանքները կանոնավոր ու կազմակերպված կերպով տանելու համար կազմակերպել շրջանային ագիտ—ժողովներ։

3. Սերտ կապ հաստատել Արհմիության Խորհրդի Կուլտբաժնի, Քաղ-բաժնի, Քաղլուսավարի յեվ այլն կուլտ—կրթական հիմնարկների հետ, լսել նրանց զեմուցումները, քննության առնել ծրագրերը յեվ ղեկավարել աշխատանքները։

4. Վերջացնել կազմակերպության անդամների վորակային հաշվեառումը յեվ ագիտ—պրոպ ուժերի նպատակահարմար բաշխման ու ոգտագործման աշխատանքները։ Առաջ քաշել նոր ուժեր։

5. Յերեվանի յեվ գավառի մասշտաբով հաճախակի հրավիրել քաղ-կրթական աշխատավորների խորհրդակցություններ։

6. Տվյալ ժամանակամիջոցում լսել 3 շրջանի հրահանգիչների զեկուցումները։

7. Սիստեմատիկ կերպով հրավիրել քաղ-դպրոցների յեվ խմբակավարների խորհրդակցություններ՝ ծրագրային, մեթոդական յեվ այլն հարցեր լուծելու յեվ պարզաբանելու համար։

8. Լուրջ ուշադրություն դարձնել յեվ կանոնավորել ագիտ-պրոպականդային աշխատանքների հաշվառումը, մշակելով համապատասխան ձեվեր յեվ կապ հաստատել հաշվեառման ու վիճակագրական յե-բաժնի հետ։

ԱԳԻՏԱՑԻՈՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Հնարավորության սահմաններում կրճատել կամպանիաների թիվը՝ անցկացնելով ամենահիմնականները, լուրջ ուշադրություն դարձնել, վոր նրանք կրեն խորացրած ու կազմակերպված բնույթ։

Անցկացնել հետեվյալ հիմնական յերկու կամպանիաները.—

ա. Խորհուրդների ընտրությունները յեվ համագումարները։

բ. Կոմյերիտական ծնունդ—հակակրոնական պրոպականդա։

2. Կրճատված կամպանիաների հաշվին անհրաժեշտ ե կատարել լայն մասսայական ագիտացիոն աշխատանքներ, անմիջապես կապված ընթացիկ քաղաքական կյանքի, կուսակցության ու խորհրդային իշխանության հերթական խնդիրների հետ։

Մոտ ապագայում ընթացիկ ագիտացիոն աշխատանքների բովանդակությունը պետք ե լինի։

1. Արհմիությունների համագումարները
2, 1905 թ. 20-րդ տարեդարձի հոբելյանը
3. Ուսուցչական կոնֆերանսը յեվ համագումարները
4. Կոոպերացիայի գաղափարների տարածումը
5. Աշխատանքի արտադրողականության բարձրացումը
6. Միջազգային դրությունը
7. Հայաստանի տնտեսական դրությունը
8. Ագիտ—Պրոպականդա
9. Փոխոգկոմի ընտրությունը

ա. Սիստեմատիկ ինֆորմացիոն նամակների միջոցով շրջանային հրահանգիչներին յեվ կուս. անդամներին տեղյակ պահել ընթացիկ քաղաքական կյանքի յեվ կուսակցական հերթական խնդիրների հետ։

բ. Առնվազն ամիսը մեկ անգամ կազմակերպել կուսակցական ու պրոֆմիության անդամների համար զեկուցումներ միջազգային դրության յեվ այլ քաղաքական հարցերի մասին։ Զեկուցումները աղագրել յեվ տպագրել թերթում, վորպես նյութ ոգտագործել առորյա աշխատանքների ընթացքում։

4. Ավելի լուրջ ուշադրություն դարձնել անկուսակցական գյուղացիական կոնֆերանսների կազմակերպման վրա, վորպես ագիտացիոն նպատակահարմար մեթոդներից մեկը, վորի համար անհրաժեշտ ե.

ա. Ուսումնասիրել մինչեվ հիմա կայացած անկուսակցական գյուղացիական կոնֆերանսների փորձը։

բ. Նախորոք մանրամասն նախապատրաստել ու մշակել

բոլոր այն հարցերը, վորոնք դրվում են կոնֆերանսներին, տրամադրելով զեկուցողներին համապատասխան նյութեր։

գ. Կոնֆերանսներում դնել գյուղացիության անմիջապես հետաքրքրող հարցեր, կապված մեր ընթացիկ քաղաքական խնդիրների հետ։

դ. Կոնֆերանսներից հետո աշխատել, վորպեսզի ներկայացուցիչները համապատասխան զեկուցումներ կազմակերպեն գյուղերում ու հաշվետու լինեն նրանց առաջ։

5. Մասսաներից նոր ուժեր առաջ քաշելու, ագիտացիոն աշխատանքները լայնացնելու ու բջիջների ագիտացիոն պրոպագանդիստական աշխատանքները ղեկավարելու համար անհրաժեշտ է.

ա. Կազմակերպել բջիջների ներկայացուցիչներից ագիտ—խմբակ

բ. Մշակել ագիտ—խմբակի աշխատանքների ծրագիրը յեվ մեթոդները։

գ. Ժամանակին ագիտ—խմբակին մատակարարել համապատասխան ագիտացիոն մատերիալներ։

6. Լենինյան կոչից հետո, յերբ մեծացել է անկուսակցականների հետաքրքրությունը դեպի կուսակցությունը, իսկ մյուս կողմից մեծացել է նայեվ արդյունաբերական ձեռնարկություններում կուսակցական ընկերների քանակը. անհրաժեշտ է։

ա. Կանոնավոր հիմքերի վրա դնել անհատական ագիտացիան։

բ. Մշակել անհատական ագիտացիայի մեթոդները ու ձևերը։

գ. Հաշվեառման լենթաբաժնի հետ մշակել այդ ասպարիզում տարվելիք աշխատանքների արդյունքների հաշվեառման ձևերը։

7. Հնարավորության սահմաններում մասնագիտացնել զեկուցողներին առանձին հարցերի վերաբերյալ (տնտեսական, ֆինանսական, հակակրոնական)։

8. Անկուսակցական մասսաներին ընդհանուր ագիտացիոն աշխատանքներին մասնակից կարելի յե դարձնել գլխավորապես բանվորական ակումբների, խրճիթ-ընթերցարանների միջոցով. այդ նպատակով անհրաժեշտ է.

ա. Կանոնավորել յեվ ուժեղացնել գավառային ակումբային վարչության աշխատանքները։

բ. Քաղուսվարի միջոցով քննել քաղաքում յեվ գյուղերում կազմակերպվելիք ներկայացումների ռեպերտուարը։

գ. Ուշադրություն դարձնել բան-ակումբի աշխատանքների վրա, կազմակերպել կուսակցական կոլեկտիվ ու նրա յուվ վարչության ֆրակցիայի միջոցով ղեկավարել աշխատանքները։

դ. Մշակել ակումբների յուվ խրճիթ-ընթերցարանների մասսայական ագիտացիոն աշխատանքների ծեվերը։

9. Ագիտացիոն աշխատանքների հիմնական մոմենտներից մեկը դարձնել Լենինիզմի գաղափարների յուվ ավանդների տարածման խնդիրը։ Այդ առթիվ կազմակերպել՝

ա. Զեկուցումներ, զրույցներ բանվորական հերթական ժողովներում ու գյուղացիական կոնֆերանսներում յուվ այլն, անմիջապես կապելով ներկա մոմենտի յուվ խորհրդային իշխանության հերթական խնդիրների հետ։

բ. Կազմակերպել 5 դասախոսությունների շարք ընկ. Լենինի կյանքի, գործունեության, ուսմունքի յուվ այլ հարցերի շուրջը, կուսակցական, բանվորական, կարմիր-բոնակայինների ակումբներում, խրճիթ-ընթերցարաններում յուվ դպրոցներում։

10. Ուժեղացնել ազգային փոքրամասնությունների մեջ տարվելիք աշխատանքները, այդ նպատակով՝

ա. Հրավիրել թյուրքերի, մոլոկանների անկուսակցական կոնֆերանսներ։

բ. Ուշադրություն դարձնել այբենական անգրագիտության վերացման աշխատանքների վրա։

գ. Քաղաքում կազմակերպել 3 քաղ-գրագիտական դպրոց, իսկ 2-ը շրջաններում։

դ. Ուշադրություն դարձնել քաղաքի թյուրքական ակումբի աշխատանքների վրա, բոլոր ագիտացիոն կամպանիաները անցկացնել ակումբում։

ե. Լայնացնել թյուրքական շրջաններում խրճիթ-ընթերցարանների ցանցը։

զ. Յերեք ամսվա ընթացքում ագիտ-կելլեգիայի նիստում յերկու անգամ լսել թյուրք հրահանգչի զեկուցումը շրջաններում տարվելիք քաղ-կրթական աշխատանքների մասին։

ը. Աջակցել նոր այբուբենի տարածմանը։

թ. Կուլտ. բաժնի միջոցով ուժեղացնել պրոֆ. միության թյուրք անդամների մեջ տարվելիք աշխատանքները։

ժ. Բոլոր ագիտացիոն կամպանիաները անցկացնել թյուրքական շրջաններում։

11. Շեֆ. աշխատանքներն ամրապնդելու ու մշտական ղեկավարություն ցույց տալու համար, անհրաժեշտ է.

ա. Ուժեղացնել Գավշեֆբյուրոյի աշխատանքները։

բ. Ուսումնասիրել շեֆ. աշխատանքների փորձը, անցկացնել աշխատանքների միասնական ձևերը յեվ մեթոդներ։

գ. Հիմնական ուշադրություն դարձնել կատարած աշխատանքների հաշվեառման վրա։

դ. Նախ քան գյուղեր գնալը, շեֆ բջիջների ներկայացուցիչների համար կազմակերպել սիստեմատիկ հրահանգչական զեկուցումներ։

ե. Շեֆ. աշխատանքներին մասնակից դարձնել Լենինյաններին յեվ անկուսակցականներին, գլխավորապես բանվորական մասսաներին։

12. Գլխավոր ուշադրություն դարձնել բավորա-գյուղացիական յեվ այլ հասարակական կազմակերպությունների (փոխոգկոմի, ՀՈՆԲԸ-ի—ԲՈՄԸ-ի, ՆՈՏԻ, Դոբրոխիմի) աշխատանքների վրա։ Կազմակերպել ու ղեկավարել նրանց աշխատանքները։

13. Կանոնավորել շրջիկ կինոյի աշխատանքները, վորը հակայական նշանակություն ունի նոր կենցաղի ու գյուղացիության կուլտուր-կրթական մակարդակը բարձրացնելու տեսակետից։

ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍՏԱԿԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Մինչեվ 7-րդ գավ-կոնֆերանսը վերացնել այբբենական անգրագիտությունը յեվ հնարավորության սահմաններում նայեվ կիսագրագիտությունը կուսակցական ընկերների միջից։

2. Կազմակերպել քաղաքում 12 քաղ-դպրոց քաղ-անգրագետ յեվ կիսագրագետ ընկերների համար, դպրոցներում ընդունել նայեվ անկուսակցականներին։

3. Անցկացնել Լենինյան կոչի խմբակների աշխատանքների ստուգումը յեվ հաշվեառումը ու նրանց յելս տեղավորել քաղ-դպրոցներում։

4. Ավելի պատրաստված ընկերների համար կազմակերպել ցածր ու բարձր աստիճանի մարքսիստական յեվ Լենինիզմի խմբակներ։

5. Գլխավոր ուշադրություն դարձնել անհատական ինքնազարգացման աշխատանքների վրա՝ տալով համապատասխան ցուցմունքներ, ծրագրեր ու ղեկավարություն։

6. Մասսայական պրոպագանդիստական աշխատանքները, նրանց լայնացումն ու խորացումը պահանջում են ավելի մեծ քանակով բաղաքականապես պատրաստված ընկերներ։

Այդ նպատակով անհրաժեշտ է.

ա. Հիմնել 1-ին աստիճանի կուսակցական դպրոց։

բ. Վերամշակել դպրոցի ծրագիրը։

գ. Սիստեմատիկ ղեկավարել դպրոցի նորմալ աշխատանքները։

7. Կանոնավորել դիսկուսիոն կոլեկտիվի աշխատանքները յեվ կազմել նախորոք նրա աշխատանքների ծրագիրը։

8. Մշակել պրոպագանդիստական աշխատանքների մեթոդները՝ համաձայն բաղ-դպրոցների յեվ խմբակների աշխատանքների փորձի։

9. Անցկացնել բանակական յեվ վորակային հաշվեառում կազմակերպվելիք դպրոցների, նրանց ղեկավարների կատարված աշխատանքների։

10. Գլխավոր ուշադրություն դարձնել համալսարանի, բանֆակի, 2-րդ աստիճանի դպրոցների վրա, ուժեղացնելով կուսակցության ազդեցությունը անկուսակցական ուսանողության վրա։ Այդ նպատակով.

ա. Ուժեղացնել Կոմիտեյին կից կազմակերպված հանձնաժողովի աշխատանքները։

բ. Կազմակերպել Համալսարանում, Բանֆակում, Տեխնիկումում, 2-րդ աստիճանի դպրոցներում բաղ-խմբակներ։

գ. Քննել հասարակագիտական առարկաներ դասավանդողների կազմը։

դ. Տրամադրել համապատասխան պատրաստված ընկերներ այդ խմբակների աշխատանքները ղեկավարելու համար։

11. Ագիտ—պրոպ աշխատանքների ասպարիզում լուրջ ուշադրություն դարձնել յեվ սիստեմատիկ կապ ստեղծել Լենկոմ յերիտմիության, Կին բաժնի, պատկոմական կազմակերպության, բանակի, Քաղ-բաժնի հետ յեվ ղեկավարել նրանց աշխատանքները։

ա. Աջակցել ու ղեկավարել Կին բաժնի մեթոդական աշխատանքները (պարապմունքների ծրագրները, պատգամավորուհիների ժողովները, խմբակները յեվ այլն)։

բ. Տրամադրել Յերիտմիության մարքսիստական յեվ Լենինիզմի խմբակների համար համապատասխան պրոպագանդիստական ուժեր։

գ. Քննել յեվ տալ խմբակների ծրագիրները։

դ. Ղեկավարել ակումբային աշխատանքները։

ե. Ղեկավարել խմբակների սեմինարական աշխատանքները։

Հ 38402
ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՏՈՒՀԱՄԱԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ԱԿՈՒՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Ներկուսակցական քաղ-կրթական ու մասսայական ապապագանդիստական աշխատանքների մեջ հիմնական տեղ և բռնում ակումբային աշխատանքը, այդ նպատակով անհրաժեշտ է—.

ա. Կանոնավորել ակումբի գրադարան- ընթերցարան։

բ. Անցկացնել ակումբի կամավոր անդամագրություն յուր կազմել նրա կանոնադրությունը։

գ. Կազմակերպել Լենինի անկյուն ու լենինիզմի խմբակը։

դ. Կազմակերպել կուսակցական, խորհրդային, կոոպերատիվ յուր այլն աշխատանքների թե տեսական յուր թե գործնական ուսումնասիրող խմբակներ։

ե. Ուժեղացնել ակումբի վարչությունը յուր կազմակերպել յերաժշտական, թատերական գրական-գեղարվեստական յուր անսամբլների խմբակներ։

զ. Կազմել ամբողջ ակումբի յուր առանձին խմբակների աշխատանքների ծրագիրը։

ը. Ակումբին կից ունենալ պատի լրագիր յուր կուս-թղթակիցների անկյուն։

թ. Կազմակերպել զանազան զրույցներ քաղաքական, տնտեսական, կենցաղային յուր այլ հարցերի վերաբերյալ. Բոլոր քաղաքական կամպանիաները անցկացնել նայելով ակումբում, կազմակերպել յերեկույթներ, քաղ-դասեր, խմբակների աշխատանքների կենդանի ցուցահանդես յուր այլն։

ԱՇԽԱՏԱՆՔ ԳՅՈՒՂՈՒՄ

1. Կազմակերպել 14 շրջիկ դպրոցներ, գյուղերում 6 շաբաթ տևողությամբ. դպրոցներում ընդունել կուսակցական յուր Լենկոմյերիտմիության անդամներին յուր անկուսակցական գյուղացիներին։

2. Մշակել դպրոցների ծրագիրը, ուսուցչական կազմը, նախահաշիվը յուր այլն։

3. Խրճիթ-ընթերցարանների աշխատանքները կանոնավորելու յուր ուժեղացնելու համար անհրաժեշտ է.

ա, Գյուղում տարվելիք ամբողջ կուլտուր- կրթական աշխատանքները կենտրոնացնել խրճիթ-ընթերցարաններում։

բ. Այնացնել որինակելի ընթենցարանների ցանցը։

գ. Վերջացնել խրճիթ-ընթերցարանների յուր զրադարան-

ների ստուգման աշխատանքներն ու նրանց վարչությունների ընտրությունները։

դ. Կազմակերպել շրջանային մասշտաբով քաղլուսավարչություն խրճիթ-ընթերցարանների յեվ անգրագիտության վերացման աշխատանքները ղեկավարելու համար։

ե. Կազմել խրճիթ-ընթերցարանների աշխատանքների բովանդակության ծրագիրը յեվ վարչությունների անելիքները։

9. Հունվարի վերջերին անցկացնել գավառային մասշտաբով խրճիթ-ընթերցարանների մրցանակաբաշխություն։

10. Շեֆ-բջիջների, կուսակցական, յերիտմիության բջիջների միջոցով մասնակից դարձնել ուսուցչությանը ու հողաչափներին խրճիթ—ընթերցարաններում յեվ գյուղում տարվելիք կուլտուր—կրթական աշխատանքներին։ Այդ նպատակով.

ա. Ուշադրություն դարձնել գյուղական ուսուցչության քաղաքական մակարդակի բարձրացման վրա, կազմակերպելով ինքնազարգացման խմբակներ։

բ. Քաղաքական կյանքի հետ կապելու համար մատակարարել նրանց գրականություն յեվ լրագրեր—.

գ. Կապել նրանց խրճիթ-ընթերցարանների ու պատի լրագրերի հետ։

դ. Ուշադրություն դարձնել Լուսաշխի տան վրա յեվ ղեկավարել քաղ—կրթական աշխատանքները։

ե. Սերտ կապ պահպանել Լուսաշխի հետ յեվ նրա միջոցով ուժեղացնել աշխատանքները ուսուցչության մեջ։

11 Վարժական կետերում նախազինակոչների մեջ տարվելիք աշխատանքների ապարիզում անհրաժեշտ ե.

ա. Տրամադրել համապատասխան ուժեր քաղ—կրթական աշխատանքները ղեկավարելու համար։

բ. Հաշվեառման յենթարկել անգրագետներին յեվ տեղավորել լիկ—կայաններում։

գ. Խրճիթ—ընթերցարաններին կից կազմակերպել կարմիր անկյուն։

12. Գյուղում տարվելիք ագիտ—պրոպ աշխատանքների մեջ հիմնական տեղը պետք ե գրավի գյուղատնտեսական ու բնագիտական գիտելիքների տարածումը. այդ նպատակով անհրաժեշտ ե.

ա. Երջիկ քաղ—դպրոցների ծրագրի մեջ մտցնել գյուղատնտեսական յեվ բնագիտական առարկաներ։

բ. Շեֆ. բջիջների, գյուղական ուսուցիչների յեվ հողա-

ափերի միջոցով կազմակերպել խրճիթ—ընթերցարաններում զեկուցումներ։

գ. Լայն կերպով տարածել այդ ասպարիզում յեղած գրականությունը, յեվ ընթերցարաններում կազմակերպել զանազան բրոշյուրների բարձրաձայն ընթերցանություն։

դ. Գավառային մասշտաբով ագրո—պրոպագանդային աշխատանքները կազմակերպելու յեվ ղեկավարելու համար կազմել գավհանձնաժողով։

13. Հակակրոնական պրոպագանդայի ասպարիզում անհրաժեշտ է.

ա. Նրան տալ խորացրած սիստեմատիկ բնույթ։

բ. Գլխավորապես պայքարել նախապաշարումների ու անտիապաշտության դեմ։

գ. Լայն կերպով տարածել այդ ուղղությամբ լույս տեսած գրականությունը։

դ. Ակումբին կից կազմակերպել անաստվածների խմբակ՝ այդ ուղղությամբ պրոպագանդիստական ույժեր պատրաստելու համար։

ե. Տանել նախապատրաստական աշխատանքներ կոմյերիտական ծնունդը պրոպագանդիստական բեկումով տոնելու համար։

14. Կոոպերացիայի գաղափարները տարածելու յեվ այդ ասպարիզում աշխատողներ պատրաստելու համար անհրաժեշտ է.

ա. Քաղաքի քաղ—դպրոցների ծրագրի մեջ մտցնել կոոպերացիայի ավանդումը։

բ. Շրջիկ —դպրոցների ծրագրի մեջ մտցնել կոոպերացիայի ավանդումը։

գ. Շրջաններում կազմակերպել յերկշաբաթյա դասընթացքներ կոոպերացիայի աշխատողների համար. կազմել ծրագիրը։

դ. Կազմել թեզիսներ շրջաններում աշխատող ընկերների համար։

15. Գյուղում հիմնական աշխատանքներից մեկը համարել պատի լրագրերի տարածումը. այդ նպատակով անհրաժեշտ է.

ա. Հաշվեառման յենթարկել գոյություն ունեցող պատի լրագրերը։

բ. Պատի լրագրերի շուրջը համախմբել կուս—գյուղ թղթակիցներին յեվ ուսուցիչներին։

գ. Ագիտ, բաժնին կից կազմակերպել թղթակիցների ու

պատի լրագրերի բյուրո, որի միջոցով ղեկավարել պատի լրագրի աշխատանքները։

դ. Մշակել մանրամասն հրահանգ, թե ինչ ձևով պետք է կազմակերպել պատի լրագրերը։

յե. 3 ամսվա ընթացքում շրջաններում հրավիրել մեկ անգամ գյուղ. յեվ կուս. թղթակիցների խորհրդակցություններ։

16. Գլխավոր ուշադրություն դարձնել «Խորհրդային Հայաստան» յեվ «Մաճկալ» թերթերի ուժեղացման ու տարածման վրա. այդ նպատակով անհրաժեշտ է.

ա. Շարունակել թերթերի տարածման կամպանիան։

բ. Հաշվեառման յենթարկել շրջանների գյուղ. յեվ կուս. թղթակիցներին։

գ. Գավբյուրոյի միջոցով ղեկավարել կուս-թղթակիցների աշխատանքները։

դ. Քաղաքում հաճախակի հրավիրել կուս-թղթակիցների խորհրդակցություններ։

յե. Բան թղթակիցների համար բաց անել դասընթացքներ։

զ. Եքսպեդիցիայի միջոցով կանոնավորել թերթերի տարածման հարցը։

17. Կանոնավորել շրջանային յեվ գյուղական գրադարանները, մասնակարարել հայերեն համապատասխան գրականություն։